ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ն-22

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում

29 հունվար 2018թ.
№ Ն-22(Հ-22)2018

(Վերաձևակերպվել է 22 մայիս 2019թ.
№ Ն-22(Հ-22)2019

Ուժի մեջ է մինչև 26 դեկտեմբեր 2020թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «Էֆ-Դի-Էյ Լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» № 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման նշանակված մարմին (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունվարի 29-ի № 60-Ա հրաման):

ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն. 0037, Չոլաքյան փ., տ. 23

Էլ. Հասցե: info@fdalab.am; Հեռ./ֆաքս: (+374 60) 46-00-76

«Էֆ-Դի-Էյ Լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգեր

1. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1692-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3101 00 000», «3102», «3103, «3104», և «3105» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):
2. . ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1795-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3402» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք):
3. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի № 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 219-Ն որոշում:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգեր

1. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 007/2011)
2. «Խաղալիքների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 008/2011)
3. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 009/2011)
4. «Հացահատիկի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 015/2011)
5. «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)
6. «Մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011)
7. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011)
8. «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 027/2012)
9. «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 029/2012)
10. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 033/2013)
11. «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 034/2013)
12. «Ծխախոտային արտադրանքի անվտանգության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 035/2013)
13. «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 040/2016)
14. «Փաթեթավորված խմելու ջրի, ներառյալ բնական հանքային ջրի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 044/2017)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝
Կ.Տ.

(ստորագրությունը)